

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ՄԱՐԲՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻՆ
ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ
ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

371

4-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՈՆՈՒԹՅԱՆ ԳՅՏԱԿՈՆ ՀՐԱՏԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 1990

MAR 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋՅԵՔ



ՊՐԻՆՏ ԳՐԱԿ

ՊՐԻՆՏ ԳՐԱԿ

371
4-15
ԿԽ

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻՆ
ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ
ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ճառ ֆաղափային և գյուղական դպրոցների գերագանցիկ ուսուցիչների՝
«Учительская газета»-յի խմբագրության գումարած խորհրդակցությանը
1938 թ. դեկտեմբերի 28-ին



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

16 MAY 2013

45 565

4707
39



М. И. КАЛИНИН

Об овладении марксизмом-ленинизмом и задачах советского учительства

Государственное издательство полит. литературы
Ереван ● 1939

I. ՄԱՐԿՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԹԵՈՐԻԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընկերներ, մեզ մոտ այժմ շատ են խոսում մարքսիզմ-լենինիզմի հեղափոխական թեորիան ուսումնասիրելու մասին, բողջեիկյան կուսակցութեան պատմութեանն ուսումնասիրելու մասին: Գլխավորն այստեղ այն է, վոր մարդ յուրացնի այդ թեորիայի բուն էությունը, սովորի ոգովել դրանից գործնականում և ըմբռնի մեր կուսակցութեան հեղափոխական պայքարի փորձը:

Կարգալով «ՀամԿ(բ)ի պատմութեան համառոտ դասընթացը», յես հիացա նրա բովանդակութեան խորութեանից, մտքի հստակութեանից և շարադրանքի պարզութեանից, բայց այժմ բառացի հիշել չեմ կարող, մոռացել եմ: Սակայն բանն այստեղ վոչ միայն հիշելն է, այլ գլխավորը՝ հասկանալն է: Մարքսիտական-լենինյան թեորիան հավատի սիմվոլ չէ, դոգմաների ժողովածու չէ, այլ գործողութեան ղեկավարութեան է: Յերբ վոմանք խոսում են մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու մասին, ապա ասում են, «խորացված աշխատանք», «առանձնապես խորացված աշխատանք» և այլն: Սակայն պետք է հասկանալ, վոր մարքսիզմ-լենինիզմի մեջ գլխավորը—այդ վոչ թե տառն է, այլ նրա էությունն է, հեղափոխական վոգելն է:

Ի՞նչ է նշանակում, յերբ ասում են «ընդգրկել մարքսիզմ-լենինիզմն ամբողջովին»: Ի՞նչպես հասկանալ այդ: Արդյոք այդ հասկանալ վորպես մարքսիզմ-լենինիզմի ամբողջ գերիմաստութեանը բառացի անդիբ անե՞լը՝ արդեն պատրաստի յեղրակացութեանների և ֆորմուլաների ձևով: Թե՞ այդ հասկանալ վորպես մարքսիզմ-լենինիզմի էությունը տիրապետելը և այդ թեորիան կյանքում, իր հասարակական-քաղաքական և անձնական կյանքում վորպես գործողութեան ղեկավարութեան կիրառելու կարողություն: Յերկրորդն ավելի ճիշտ, ավելի ուղիղ, ավելի կարեւոր կլինի, նա հիմնականն է մարքսիզմ-լենինիզմի մեջ: Յեւ

յերբ ասում են «տիրապետել մարքսիզմ-լենինիզմին», ապա այդ նշանակում է սովորել այդ տեսնել ղինամիկայում:

Մարքսիզմ-լենինիզմը ավելի կամ պակաս չափով սերտել կարող է ամեն վտը, իսկ յուրացնել նրա եյուլթյունը և սովորել այն կիրառել՝ սա ավելի դժվար է:

Մենք գիտենք բազմաթիվ հին բանվորներ, վորոնք մասնակցել են քաղաքական պայքարին: Մի՞թե նրանք մարքսիզմ-լենինիզմն ուսումնասիրել են այնքան, վորքան դուք: Ձե՞ վոր նրանք «Համկ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց» չեն ունեցել: Շատ քիչ է նրանց վիճակվել սիրտեմատիկորեն ուսումնասիրել այդ թեորիան: Թերևս, մի տաս հեղափոխական գրքեր կարգացել են— և ընդամենն այդ: Իսկ ասավասիկ իրենց պրակտիկայում նրանք բավականին ճիշտ են կիրառել մարքսիզմ-լենինիզմը: Այդ թեորիայի դրոշի ներքո գնացել են և այժմ գնում են միլիոնավոր մարդիկ: Յեվ շատ բանվորներ ճիշտ են մոտեցել հասարակական յերևույթներին, քաղաքական կյանքին, նրանք ճիշտ են ըմբռնել մարքսիստական-լենինյան գիծը՝ այս կամ այն հարցի լուծման ժամանակ: Իրա պատճառն այն է, վոր նրանք հասկացել են, ըմբռնել են մարքսիստական-լենինյան թեորիայի հեղափոխական եյուլթյունը:

Մարքսիզմ-լենինիզմը ուսումնասիրել հարկավոր է վո՛չ սոսկ ուսումնասիրելու համար, վո՛չ ձևի համար: Մարքսիզմ-լենինիզմը մենք ուսումնասիրում ենք վո՛չ թե նրա համար, վոր այն իմանանք ձևականորեն, ինչպես առաջներում հավատի ուսմունք եյին ուսումնասիրում: Մարքսիզմ-լենինիզմը մենք ուսումնասիրում ենք վորպես մեթոդ, վորպես գործիք, վորի ոգնությամբ մենք ճիշտ վորոշում ենք մեր քաղաքական, հասարակական և անձնական վարքագիծը: Մենք գտնում ենք, վոր դա մարդու ամենահզոր գործիքն է իր գործնական կյանքում:

Այժմ մեր առջև հարց է ծառանում, թե ի՛նչպես սովորենք ավելի ճիշտ կիրառել մարքսիզմ-լենինիզմը պրակտիկ գործում:

Ամենից առաջ հարկավոր է, թեկուզ ընդհանուր գծերով, իմանալ մարքսիզմ-լենինիզմի թեորիական հիմունքները, թեկուզ ընդհանուր գծերով իմանալ կոմունիստական կուսակցության պատմությունը: Կուսակցության պատմությունը ուսումնասիրելիս պետք է նայել, թե այս-ինչ և այս-ինչ հանդամանքներում ի՛նչպես են բողբեկները լուծել այս-ինչ գործնական հարցը: Ինչո՞ւ նրանք այդ հարցն այսպես են լուծել և վոչ թե այլ կերպ,

ինչի՞ց են նրանք յեղել: Ինչո՞ւ, որինակ, մենք բոյկոտի յենթարկեցինք Բուլիզինյան Դուման, ինչի՞ց եյինք մենք յելում: Ի՞նչ պատճառով, հետո, քաղաքական ավելի պակաս նպաստավոր հանդամանքներում, մենք ընտրեցինք II, III և IV Պետական Դումայի համար: Ինչո՞ւ: Բոլոր այդպիսի հարցերի վերլուծման ժամանակ (իսկ այդպիսի հարցեր պատմության մեջ շատ են յեղել, վորովհետև պայքար շատ է յեղել) դա ծառայում է ասես վորպես որինակ մարքսիզմ-լենինիզմի մեթոդի կիրառման, մյուս հարցերի լուծմանը ցույց տրվելիք մոտեցման՝ այլ, քաղաքական նոր իրադրության մեջ, ժամանակակից պայմաններում ծագող հարցերի լուծմանը ցույց տրվելիք մոտեցման: Հասկանալի յե, վոր ընդամենն պետք է ուշադրության առնել տեղի ունեցած բոլոր փոփոխությունները, բոլոր նոր պայմանները:

Ուստի մարքսիզմ-լենինիզմն ուսումնասիրելիս ամենադիպավորն է— իրեն ստուգել այն հարցերի լուծմանը ցույց տրվող մոտեցման գործում, վորոնք այսօր, այս րոպեյին հերթի յեն դըրված կյանքի զանազան բնագավառներում: Վերցնենք վորևէ կենցաղային որինակ: Ահա ուսուցչուհին բաժանվեց ամուսնուց: Մարքսիստական տեսակետից ի՛նչպես պետք է լինի մարդկանց վարքագիծն այս դեպքում: Ի՞նչպես վարվել: Ձե՞ վոր այդպիսի հարցի նկատմամբ ել պետք է ճիշտ մոտեցում գտնել, այն ջննել ու լուծել մարքսիստորեն: Ամենահասարակ մոտեցումը (և դա ավելի կամ պակաս չափով,— գոնե, ձևականորեն,— ճիշտ է) կլինի ասել.— այդ մասնավոր գործ է, վորը քաղաքականության հետ առնչություն չունի: Սակայն, վորչափով դա հայտնի յե, աչակերտները դրա մասին խոսում են, դյուրում բամբասում են, ուսուցչուհու հեղինակությունը խախտվել է,— անհրաժեշտ է այդ փաստի խելացի բացատրությունը:

Տեսնո՞ւմ եք, թե ի՛նչպես յերբեմն նույնիսկ զուտ կենցաղային հարցը կարող է դառնալ հասարակական-քաղաքական հարց: Կյանքում յուրաքանչյուր որ տեղի յեն ունենում անվերջ քանակությամբ կենցաղային զանազան դեպքեր: Ճիշտ լուծումը գտնել այդ դեպքերում և ճիշտ հասկանալ, թե ի՛նչպես վերաբերվել դրանց՝ մարքսիզմի տեսակետից,— ահա այստեղ է, վոր մարքսիստն ստուգվում է:

Ձե՞ վոր մարքսիզմ-լենինիզմը— դա այն բանալին է, վորը հնարավորություն է տալիս լուծելու այս կամ այն հարցը: Իս

միայն հնարավորութիւնն և տալիս և վոչ թէ լուծում և, հնարա-
վորութիւնն և տալիս ավելի ճիշտ մտտենալու հարցի լուծմանը:
Սակայն դա պատրաստի ունեցելու չէ կյանքի բոլոր դեպքերի հա-
մար: Առօրյա հարցերի լուծման, դրանց լուծման նկատմամբ
ցույց արվող մտտեցման գործում ել զգացվում և, թէ վորն և
խակական բոլջեիկը և վորը—տիրացուն, տառակերը:

Լինում են մարդիկ, վորոնք իրոք տիրապետում են մարք-
սիզմ—լենինիզմին և կարողանում են այդ թեորիան կիրառել
գործնական հարցերի լուծման ժամանակ: Բայց լինում են մար-
դիկ, վորոնք լեցուն են գիտական տեսութեանով, ինչպես կարտո-
ֆիլով պարկը, բայց գործնականորեն այդ գիտելիքները կիրա-
ռել չեն կարողանում: Այդպիսի մարդիկ ամեն ինչ կարող են ան-
գիր պատմել, նաև դասախոսութիւն կկարդան: Իսկ յետև նրան
ասես, վոր ձեր գալորոցում պատահել և այսպիսի մի կազուս—այ՛,
որինակ, հայրը ծեծել և իր վորդուն, վորը սովորում և այդ
գալորոցում—և հարց ասա, թէ հասարակական տեսակետից ինչ-
պես ճիշտ մտտենալ այդ կոնկրետ դեպքին, ապա այդպիսի մար-
դիկ կչփոթվեն՝ յերեք ծառի արանքին կմտրովեն: Իսկ յետև
նրանք վորեւեւ առաջարկութիւն մտցնեն ևլ, ապա դա ոպորտու-
նիտական կլինի, դա չի համարատասանի մարքսիզմ—լենինիզ-
մի վորում, թեպէս նրանք բերեն մի կույտ ցիտատներ: Ոպոր-
տունիզմը միշտ մարքսիզմ—լենինիզմն ուզողի ժխտելով չի ար-
տահայտվում միայն: Յերբեմն այդ յերևան և գայիս տառակե-
րութիւն մեջ, այդ թեորիային զոգմատիկ վերաբերմունք ցույց
տալու մեջ:

Ահա վասիկ՝ գործնական հարցերը մարքսիզմ—լենինիզմի էյու-
թյան խակական յուրացման հիման վրա լուծելն ևլ հենց բոլջեիզ-
մի գալորոցն և:

Տեքստի ուսումնասիրումը—այդ տեքստի ուսումնասիրումն
և միայն: Յեզ ինչպես վոր գալորոցը յերեխանների համար դեռ ամ-
բողջ բուն կյանքը չէ, այլ միայն գալորոց և, այնպես ևլ մարքսիզմ-
լենինիզմի ուսումնասիրումն ուսումնական հաստատութիւննե-
րում, զանազան խմբակներում և սեմինարներում, նմանապես
ինքնուրույն ուսումնասիրումը և այլն—այս ամենը միայն ուսում-
նասիրումն և: Մարդ արդ ուսումնասիրման դեպքում միայն
գրքով և իմանում մարքսիզմ—լենինիզմը: Իսկ ահա յերբ նա ըն-
կրդմի քաղաքական կյանքի մեջ, հասարակական գործունեյութիւն
մեջ, յերբ նա կիրառի այդ մեթոդը, և կիրառի գիտակցորեն,

այդ ժամանակ—ուրիշ բան և: Կյանքի հարցերի գործնական լուծ-
ման ժամանակ, այն հարցերի, վորոնց առիթ և լինում հանդի-
պել ամեն ոք, այդպեղ ևլ հենց արտահայտվում և մարքսիզմ-
լենինիզմը, այդպեղ ևլ հենց ստացվում և մարքսիզմ—լենինիզմի
գլխավոր գալորոցը, այդպեղ ևլ հենց յերևան և գալիս խակական
մարքսիստ—լենինյանը:

Գլխավոր գալորոցն այն չէ, վոր սեմինարում գրադվեցիր,
կամ լեկցիա լսեցիր: Այդ միայն ոժանդակ և:

Գլխավոր գալորոցն ստացվում և այն ժամանակ, յերբ խոսեք-
գրուցեք ժողովրդի հետ, յերբ վորոշում ընդունեք ծուլ աշա-
կերտի մասին: Իսկ ի՞նչ վորոշում ընդունել. յերկու թէ յերեք
դնել, վունդել ուսումնական հաստատութիւնից թէ, ընդհակա-
ռակը,—գիշողաբար վերաբերվել:

Ահա՛ այդպիսի հարցերի լուծման ժամանակ ևլ հենց կլինի
մարքսիզմ—լենինիզմի ամենագլխավոր գալորոցը:

Ինչպես վոր ինժեներ—տեխնոլոգի համար՝ գործարանում աշ-
խատելը՝ նրա տեխնոլոգիական գիտելիքների գործնական կիրա-
ռումը և վորձի կուտակումն և հանդիսանում, ինչպես վոր ու-
սուցչի համար՝ գալորոցում անմիջականորեն աշխատելը նրա ման-
կավարժական գիտելիքների գործնական կիրառումն և հանդիսա-
նում, այնպես ևլ մարքսիզմ—լենինիզմը կենդանի, որդանական
միասնութիւնն և թեորիայի ու պրակտիկայի:

Յեզ այսպես, դուք այժմ հասկացաք, թէ ինչի մասին եմ
խոսում յես ամբողջ ժամանակ: Յես ուզում եմ պարզ գարծնել
այն միտքը, վոր մարքսիզմ—լենինիզմին տիրապետելու համար
բոլորովին բախական չէ այդ թեորիայի ֆորմուլաներն ու յեզ-
րակացութիւններն անգիր անելը, դրա համար բախական չէ նաև
նրա էյութիւնը յուրացնելը: Մարքսիզմ—լենինիզմին իրոք տիրա-
պետելու համար պեաք և դեռ սովորել գործնական հարցերը լու-
ծելիս ուսովի այդ թեորիայից, իսկ յետև ավելի առաջ գնանք,—
ապա նաև կարողանալ այդ թեորիան հարստացնել կուտակված
փորձով, ընդհանրացնել փորձը, այսինքն՝ կարողանալ այն գար-
գացնել և առաջ մղել: Ահա սա ևլ հենց ամենագլխարն և:

«Համկ(բ)ի պատմութիւնի համառոտ գաղտնիքը» արտո-
քուստ գրված և շատ հանրամատչելի ձևով, սակայն նա շատ մեծ
աշխատանք և պահանջում ընթեքցողից: Նրա մեջ արված են
մարքսիզմ—լենինիզմի բոլոր հիմունքներն ամենասեղմ ձևով:
Կարդալիս հարկավոր և մտածել ամեն մի տողի վրա: Վոչ թէ

անդեր անել, այլ լավ մտածել-խորամուխ լինել: Խոսքն այն մասին է, վոր մարդ սովորի մարքսիզմ-լենինիզմը դործնականում կիրառել, և այդ հարկավոր է սովորել: Իսկ ի՞նչպես սովորել:—Սովորել պատմական ուղիներով, և այն էլ փոխադարձ շփման և կարծիքների փոխանակման միջոցով:

Ահա այստեղ ասացին, վոր լավ կլիներ խմբակներ ունենալ: Յես լիովին հասկանում եմ այդ ձգտումը: Դա վորոշ չափով ճիշտ է, վոր խմբակը համենայն դեպս կարծիքների փոխանակման հնարավորություն է տալիս: Բայց ո՞վ ասաց ձեզ, թե այժմ դուք չեք կարող խմբակներ հավաքել: Վո՞րտեղից վերցրեք այդ: Կարդացե՛ք կուսակցութան Կենտկոմի 1938 թ. նոյեմբերի 14-ի վորոշումը: Նրա մեջ դատապարտվում է խմբակը վորպես մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրութան հարկադիր սխտեմ, վորը առաջ բարձրացվել-դարձվել էր վորպես մեր կադրերին բոլշևիզմ սովորեցնելու հիմնական ձևը, և վորպես քանակի հետևից ընկնելու գործնական արտահայտություն՝ ի վնաս պրոպագանդայի վորակի: Այստեղ ընկերն ասաց, վոր նրանց մոտ յոթ հոգի ուսուցիչներ ինքնուրույն պարապում են: Ո՞վ է ձեզ խանդարում ասել. «Մի շարաթ հետո յես գեկուցում կանեմ այս-ինչ հարցի վերաբերյալ. ուրե՛ր ուզում են հավաքվել և քննարկել, թող գան»: Մի՞թե վորևե մեկը խանդարում է:

Կյանքի ամեն մի յերևույթին պետք է մոտենա կոնկրետ կերպով, յեթե դու մարքսիստ ես: Յեվ, հասկանալի յե, իրար միջև այդպես քննարկելու գեպքում կարելի յե ավելի լավ ըմբռնել հարցը: Յերբ դուք կարդացել եք, դուք միայն մի կողմն եք վերցրել, յերեք կողմն եք վերցրել, իսկ չորրորդը չեք վերցրել: Վերջապես, վերցրել եք բոլոր չորս կողմերը: Մինչդեռ պարզվեց, վոր այդ վո՛չ թե քառակուսի յե, այլ խորանարդ է, վորն ունի վեց կողմ: Այնպես վոր ուրիշների հետ քննարկելիս միտքը հղկվում է և հարստանում:

Դուք ասում եք, վոր դիսկուսիաներ են հարկավոր: Մակայն ո՞վ է խանդարում ձեզ: Ուղեք, կհավաքվեք հինդ-տան հոգի: Ձե՞ վոր հինգ հոգին կարող են հիմնավորապես վիճարանել իրար հետ: Ո՞վ է ձեզ խանդարում: Իսկ յեթե դուք գեո գեկուցումներ ել գրեք, ապա յես պետք է ուղղակի ասեմ, —հինգ անգամ ավելի ուսումնասիրած կլինե՞ք հարցը, քան թե դուք լեկցիա լսեք: Ձե՞ վոր գեկուցում գրելու համար հարկավոր է յուրաքանչյուր բառը, յուրաքանչյուր միտքը լավ մտածել, կշռադատել: Ձեկուցում

գրելու համար հարկավոր է և՛ այնտեղ նայել աղբյուրը և՛ այստեղ նայել: Ձեկուցում գրելիս, ինչ խոսք, ավելի շատ կմշակեք հարցերը, քան թե միայն լեկցիա լսեք: Լեկցիաներին՝ յուրացնելու շատ բանից է կախված—նայած ինչպիսի դասախոս է և ինչպիսի տրամադրություն ունեք դուք: Դուք, լեկցիայի ժամանակ մի-քիչ խոսեցիք հարևանիդ հետ: Դուք ինքներդ դիտեք, վոր լեկցիայի մեջ հաճախ յերեք քառորդը ջուր է, իսկ մեկ քառորդը—չահեկան տեղեկություններ: (Մի՞ծաղ): Մենք, դժբախտաբար, չենք կարողանում ինչպես հարկն է, ջուրը մղել: Ճիշտ է, այն հարկավոր է մղել: Բայց այնուամենայնիվ լիովին չես կարող մղել այն: Չկարծեք, թե յես դեմ եմ լեկցիաներին: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր լեկցիաներն ուսուցման շատ կարևոր տեսակն են: Յես միայն ձեզ մղում եմ ինքնուրույն աշխատանքի, իսկ այդ աշխատանքը ձեզ կստիպի հաճախել լեկցիաները և ուշադրութամբ լսել դրանք:

Ի՞նչպես վերաբերվել խմբակային աշխատանքին: Գիտե՞ք ինչ, խմբակը ինչ-վոր սահմանափակվածություն նրբերանդ ունի: Բուն «խմբակ» անունը—սահմանափակվածություն նշան է: Արդյոք, դրանով իսկ վերացվում է կոլեկտիվ քննարկումը:—Վո՛չ, չի վերացվում և չի արատավորվում: Կոլեկտիվ քննարկումը պետք է զուգորդվի ինքնուրույն ուսումնասիրութան հետ, վորը հիմնական մեթոդ է հանդիսանում: Տանը պատրաստվիր, խրմբակում, փողովում գեկուցում արա՛, իսկ գեկուցման շուրջը վիճարանություններ ծավալիր: Վո՛չ թե արհեստական վիճարանություններ ծավալիր, այլ այնպես արա, վոր ամեն մեկն իր իսկական կարծիքն արտահայտի դրված հարցի վերաբերյալ, վոր չլիախենան ասել այն, ինչ վոր մտածում են: Յեթե այդ գեկուցման մեջ լինի գեթ մի կաթիլ սեփական կարծիք, յես չեմ կասկածում, վոր ձեզ մոտ տաք վիճարանություններ կլինեն: Այդ վիճարանությունները, թեկուզ Պուշկինի մասին, մարքսիզմ-լենինիզմի հիմնալի դասը կլինե՞յին:

Յերբ խոսում են մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրութան մասին, ապա հաճախ մտածում են, թե իրք միմիայն մարքսիստական գրքեր պետք է կարդալ—Մարքս, Ենգելս, Լենին, Ստալին կարդալ: Իրոք—վոչ միայն նրանք: Մական խնդիրն այն է, վոր ամեն մի գիրք մարդ կարդա մարքսիստորեն, լենինաբար, ստալինաբար: Ասենք, կարդում են Չերնիշևսկին, սա կարելի յե գանազան կերպ կարդալ: Վաթուռնական-յոթանասնական թվական-

ների առջափոր ընթերցողը նրան կարգում եր իր ձևով, այն ժամանակները լիբերալ ընթերցողը նրան կարգում եր իր ձևով, իսկ մենք, վորպես մարքսիստներ-լենինյաններ, նրան կարգում ենք մեր ձևով: Մեր ըմբռնումն այլ կլինի: Յերբ զեկուցում ես անում Չերնիչեֆսկու աշխատանքի մասին, յերբ վերլուծում ես Չերնիչեֆսկուն, յերբ ծավալում ես վիճարանությունները և մտքերի փոխադարձ հղկումը, այն ժամանակ ավելի լավ կյուրացնես մարքսիզմ-լենինիզմը:

Վիճարանությունների ժամանակ պետք է խոսել իր բառերով, իր լեզվով: Դուք պետք է ունենաք ձեր լեզուն, յես այդ գիտեմ: Հարկավոր է, վոր մարդիկ վիճարանեն, սակայն վոչ թե արհեստականորեն, այլ ըստ եյության, այսինքն այնպես, վոր դործը հասնի յեթե վոչ «տուրուզմիոցի», ապա գեթ լուրջ, տաք բանակովի: Ահա թե ինչպես պետք է դնել հարցը: Այն ժամանակ մարդիկ կհաճախեն խմբակները և կդարձվեն: Մարքսիզմ-լենինիզմի գիտելությունն ամենից լավ ձեռք է բերվում ուսումնասիրման հենց այս մեթոդի միջոցով:

Յես կարծում եմ, վոր տեքստը դուք ինձանից ավելի լավ գիտեք, յես համոզված եմ դրանում: Յեթե յես սկսեյի ձեզ հետ միասին քննություն տալ, ապա յես կտապալվեյի տեքստի դժով, անապաման կտապալվեյի: Իսկ մարքսիստներն մոտենալ հարցին, յես կարծում եմ, անշուշտ ավելի ճիշտ կկարողանամ, քան դուք, ավելի շուտ կգտնեմ մոտեցումի գիծը, վորովհետև յերկարատև փորձը, պրակտիկան, հարստացված թեորիական վեճերով,—այս բոլորը սրել են իմ զգացումները: Յես զգում եմ կեղծությունը (Фальшь), յերբ սխալ ձևակերպումն է տրվում: Այդպիսով ինձ մոտ յերևան է յեկել նոր զգացում, վորը մշակվել է թեորիական վեճերում և բանակոխվներում, վորն ինձ ընտելացրել է ուշադիր լինելու: Ուստի քննարկումից չպետք է վախենալ, այլ պետք է մարդկանց ընտելացնել դրան: Միայն այդ յեղանակով կհղկվեն ձեր միտքն ու ձեր լեզուն: Յերբ դուք իմանաք, վոր ամեն մի սխալ յեզրակացության վերաբերյալ և ամեն մի սխալ ձևակերպության վերաբերյալ ձեր դեմ վիճարանելու յեն, դուք կսկսեք ավելի ուշադիր կերպով փնտռել ավելի ճիշտ լուծումներ:

Ուստի, յեթե դուք ուզում եք հասկանալ մարքսիզմ-լենինիզմը և տիրապետել այդ թեորիային, ապա ուրեմն ինքնուրույն պարապմունքների վրա հիմնված զեկուցումները, ուֆերատները և վիճարանությունները հսկայական ոգուտ կտան ձեզ: Ինք-

նուրույն ուսումնասիրումը մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու հիմնական մեթոդն է:

II. ՈՒՍՈՒՅՁԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆ Ե ՆՈՐ ՄԱՐԿՈՒ—ՍՈՅԻՍ—ԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄԸ

Գուցե յերեկ այստեղ ասվել է, իսկ այսօր ասա վոչ վոր չասաց, թե ինչպես են ձեզ մոտ յերեխաները, ինչպես է գնում աշխատանքը նրանց հետ, ինչպես են հարաբերությունները յերեխաների հետ: Այստեղ մի ընկեր հարեանցիորեն ասաց,— «Մասմանված է հերթապահություն բանվորական հանրակացարաններում: Հերթապահները հետևում են, վորպեսզի յերեխաների վարքը շատ չխանդարի կարգը»: Այո՞, անշուշտ է (Տեղից — Այո՞):

Մի՞թե դուք ուզում եք, վոր յերեխան լինի միջակ քայքայի, 45 տարեկան մարդ՝ քիչ խանդարված ստամոքսով (ծիծաղ): Կամ թե ուզում եք, վոր յերեխան լինի ձեր—չափահաս մարդկանց—ճիշտ նմանությունը: Չե՞ վոր յերեխաները խիտ շատ նախաձեռնություն ունեն: Յեթե յես ուսուցիչ լինեյի և յեթե յերեխաները վորեև տեղ թեկուզ չարաճճիություն անեյին, սակայն այնպես, վոր այդ ժամանակ քաջություն յերևար, ապա յես այդ քաջությունը մի տեսակ կիրախուսեյի, իսկ բուն չարաճճիության համար մի քիչ կնախատեյի նրանց և դրանով կըսահմանափակվեյի: Անշուշտ, պետք է տարբերել՝ չարաճճիություն ել կա, չարաճճիություն ել:

Յեթե ինձ հարց տային, թե ամենազխալորն ի՞նչ է պահանջվում ներկա մոմենտում ուսուցչից, ապա յես կասեյի.— անեցնել նոր մարդուն: (Մենք այդ հաճախ ենք ասում, և դրանով յես վոչինչ նոր բան չեմ ասում): Մեզ մոտ ստեղծվում է սոցիալիստական հասարակության նոր մարդը: Այդ նոր մարդուն պետք է պատվաստել մարդկային ամենալավ հատկություններ: Չե՞ վոր նոր, սոցիալիստական մարդը ես, նա չի լինի այնպիսի մարդ, վորի մոտ բացակայում են մարդկային զգացմունքները: Մարդը մարդ է: Սրանից պետք է յեղնել:

Իսկ մարդկային ի՞նչպիսի զգացմունքներ պետք է պատվաստել:—Նախ և առաջ, սեր, սեր դեպի իր ժողովուրդը, սեր դեպի աշխատավոր մասսաները: Մարդ պետք է սիրի մարդկանց: Յեթե նա սիրի մարդկանց, ապա ուրեմն նա ավելի լավ կապրի, ավելի ուրախ կլինի նրա կյանքը, վորովհետև վոչ վոր այնպես վատ չի

ապրում աշխարհում, ինչպես միզանորոգը—մարդատյացը: Նա ինքը բոլորից վատ է ապրում:

Յերկրորդ,—ազնվութուն: Յերեխաներին սովորեցնել ազնվութուն: Ուսուցիչը սրան պետք է, ըստիմ, հասնի հետևողականորեն՝ մանկադասարանական բոլոր յեղանակներով, ինչպիսիք միայն հնարավոր են: Չստել, չխարել, այլ իրեն ազնիվ պահել:

Յերրորդ,—բարություն: Սոցիալիստական մարդը—աշխատանքի մարդը—նա ուզում է նվաճել աշխարհը, և վոչ միայն յերկրազնդի վրա գոյութուն ունեցող աշխարհը, այլև տիեզերքը տեղից շարժել մարդու բանականության միջոցով:

Չորրորդ—ընկերական գոդում: Հարկավոր է, վոր ընկերական գոդում (спайка) լինի: Դա հարկավոր է թեկուզ այն պատճառով, վոր մենք գտնվում ենք կապիտալիստական շրջապատման մեջ, վորովհետև մեր Միութունը սիստեմատիկ կերպով հալածանքի յե յենթարկվում և յուրաքանչյուր բուրժուա անձկանոք սպառում է հարմար մոմենտի, վորպեսզի ձգձի Խորհրդային Միութունը: Իհարկե, նրանք չեն տեսնի այդպիսի մոմենտ, սակայն այս նշանակում է, վոր Խորհրդային Միութունը միայն պողպատե պարիսպով կարող է պաշտպանվել: ԽՍՀՄ-ն է՛լ ավելի ուժեղ կլինի, յեթե Խորհրդային մարդկանց մեջ ընկերական գոդում դաստիարակվի՝ վորք հասակից,—իսկական, ամուր ընկերական գոդում՝ դպրոցական հասակից: Այն ժամանակ, յեթե մարդ գա Կարմիր Բանակը կամ ընկնի ռազմաճակատ, նրա համար ավելի հեշտ կլինի մարտական գոդման մեջ մտնել: Նա կդա արդեն սիրով գոզված՝ դեպի սոցիալիստական հայրենիքը:

Հինգերորդ—դա այն է, վոր պետք է սիրել աշխատանքը, վոչ միայն սիրել, այլև ազնվորեն վերաբերվել դեպի աշխատանքը, ընդամին հաստատապես հիշելով, վոր յեթե մարդ ապրում, սնվում է և չի աշխատում, ապա այդ նշանակում է, վոր նա ուրիշի աշխատանքն է ուտում: Առանձին կարիք չկա այդ ձեր առջև դարգացնելու: Այդ՝ աշակերտների առջև պետք է դարգացնել: Աշխատանքի մասին պետք է առանձնապես հարց բարձրացնել: Մենք հաճախ ասում ենք. «Աշխատանքը պատվի գործ է»: Առաջնորդը առաջ է մղել «աշխատանքը պատվի գործ է» լողունը, և յեթե դուք միայն կրկնեք, վոր «աշխատանքը պատվի գործ է», ապա այդ քիչ կլինի:

Այդ չե առաջնորդի կամքի, կուսակցության և ժողովրդի կամքի կատարումը: Հարկավոր է, վորպեսզի յերեխաները կոն-

կրեա տեսնեն, վոր իրոք աշխատանքը պատվի գործ է: Յերեխային չես կարող խարել: Յեթե մի փոքր կեղծութուն լինի, ապա նա արդեն չի հավատա:

Կարելի յե շարունակել նոր մարդու հատկությունների թվարկումը, բայց յես կսահմանափակվեմ միայն սրանցով: Այդ—մարքսիստ-լենինյանի հատկություններն են: Սակայն նույնպիսիք են պահանջները նաև յուրաքանչյուր ազնիվ վողջամիտ մարդունկատմամբ: Մեր թեորիայի արժեքը հենց նրանումն է, վոր նա պահանջում է այն, ինչ վոր պահանջվում է ազնիվ, վողջամիտ մարդու համար:

Կարգապահությունը ինքնըստինքյան—դա բղխում է այն հատկություններից, վորոնց մասին յես ասացի վերևում: Յերեխաները սիրում են կոտրատել, ծոմուել: Մենք ինքներս ել այդպես ենք յեղել: Սողոսկել ուրիշի պարտեղը—այդ բավականութուն էր. գողացած ինձորն ավելի քաղցր էր թվում, քան իր սեփականը, կամ դնածը: Բայց համենայն դեպս պետք է ասել, վոր մարդիկ պահեն, պահպանեն արժույթը: Պետք է վոչ միայն կոտրել, այլ և ասեղծել—այդ է եյությունը: Մենք վոչ միայն քանդում ենք հինը, մենք նորը կառուցողներ ենք հանդիսանում:

Յես կարծում եմ, վոր իրոք ուսուցիչ լինելու համար մարդ պետք է ուսուցիչ ծնվի, այլ վոչ թե միայն դառնա ուսուցիչ: Ուսուցչի աշխատանքում շատ դժվարություններ կան և մեծ է ուսուցչի պատասխանատվությունը: Անշուշտ, համապատասխան դիսցիպլինայի դասավանդումը—դա հիմնական աշխատանքն է, բայց բոլորից բացի, ուսուցչին ընդորինակում են աշակերտները: Ահա թե ինչո՞ւ ուսուցչի աշխարհայացքը, նրա վարքը, նրա կյանքը, նրա մոտեցումը յուրաքանչյուր յերևույթին,—այսպես կամ այնպես ազդում են բոլոր աշակերտների վրա: Յեվ այդ հաճախ աննկատելի կերպով:

Սակայն այդ քիչ է: Կարելի յե համարձակ ասել, վոր յեթե ուսուցիչը շատ հեղինակավոր է, ապա վորոչ մարդկանց վրա ամբողջ կյանքում մնում են այդ ուսուցչի անզրեցության հետքերը: Ահա թե ինչու նաև կարևոր է, վոր ուսուցիչը հեռուի իրեն, վոր նա զգա, թե իր վարքը, իր գործողություններն ամենաուժեղ վերահսկողության տակ են գտնվում, վորպիսի վերահսկողության տակ չի գտնվում աշխարհում վոչ մի մարդ: Տասնյակ մանկական աչքեր նայում են նրան և մարդու հոգեկան կյանքի գանազան նյութանների նկատմամբ վոչինչ ավելի ուշադիր, ավել-

լի սրտան, ավելի զգացունակ բան չկա, վոչ վոք այնպես չի վորսա բորբ նորությունները, ինչպես մանկական աչքը: Այս պետք է հիշել:

Միայն յես վախենում եմ՝ ձեզ այն մտքին չըրբեմ, թե դուք պետք է անբնական պահեք ձեզ: Այդ նույնպես լավ չէ, այդ միանգամայն սխալ կլինի: Ուսուցչին անհրաժեշտ է բնականութուն է աղնվութուն բոլոր հարցերի յուժման ասպարեզում, առանձնապես դանազան մանկական գործերի յուժման ասպարեզում, պատիժների հարցում և այլն: Յենթադրենք տղան կտարեց ապակին կամ վիրավորեց աղջկան, կամ աղջկը—տղային: Այստեղ պետք է յեղնել վոչ թե միայն բուն փաստից, վորպես այդպիսինից, այլ պետք է հաշվի առնել, թե ինչպես կազդի մանկական հոգեբանության վրա այդ հարցի այս կամ այն յուժումը: Այդ հարկավոր է անպայման: Համենայն դեպս յերեխաներն ունեն իրենց «իրավարանական կողերը»: Յենթադրենք, վոր յերեխաները կովեցին, մեկի քիթը կտարեցին, իսկ հետո այդ ատժածը դնաց և գրպարնություն արեց: Մինչև իսկ չեղոք յերեխան էլ նրան դրա համար կզատապարտի և կտառի. «Ե՛ր դու մտանիչ—կովել ես ուզում, իսկ հետո էլ գնում ես դանգատում»:

Գլխավորն է—ի՞նչի ազնիվ՝ յերեխաների հետ, հետևել իրեն, մեր յերեխաներից դաստիարակել իրս լավ, իրս սոցիալիստական քաղաքացիներ—ազնիվ, քաջ, գարգացած բնկերական զգացմունք ունեցող, մանկական հոգեբանության և մանկական հնարավորությունների սահմաններում կարգադատության վարժված սոցիալիստական քաղաքացիներ:

Յեկ վերջապես, ընկերներ, հարկավոր է, վոր յերեխաների մոտ յերկար տարիների ընթացքում մնան վատ տարվորություններ, լավագույն տարվորություններ և հիշողություններ դրբորոցի մասին: Յեթե դուք հասնեք այն լանին, վոր ձեր աշակերտներն իրենց ամբողջ կյանքում պահպանեն հիշողություններ ուսման տարիների մասին, վորպես հիանալի տարիների,—այդ արդեն լավ նշան է:

Ահա, ըստիս, այն գլխավորը, վոր պահանջվում է ուսուցչից:

III. ԻՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԵՋ ՑԱՆԵԼԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ԱՄԵՆ ՈՐ ՄԱՍՆԱԿՑՆԵՐ ԱՄԵՆ ՄԻ ՈՒՍՈՒՅՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ե

Այժմ կանգ կառնեմ հասարակական կյանքի հարցերի վրա: Այստեղ կարևոր է, վոր ուսուցիչը սերտ մտտեկա մարդկանց,

իրականությանը, սովորի հասկանալ նաև տեղական իրադրությունը: Հասկանալի չէ, իդեալական կլինի, յեթե մեր բոլոր ուսուցիչները և ինտելիգենցիայի մեր մյուս կազմերը լիովին տիրապետյին մարքսիզմ—լենինիզմին: Սակայն վատ չի լինի, յեթե նրանք իմանան նույնիսկ թեկուզ այդ թեորիայի ընդհանուր հիմունքները: Այդ արդեն վատ չէ—թե՛ կոմունիստի, թե՛ անկուսակցականի համար: Յես յերաշխափորում եմ, վոր վորոշ անկուսակցականներ մարքսիզմ—լենինիզմը ավելի լավ դիտեն, քան կուսակցականները: Ճիշտ է, նրանց թիվը վոքք է: Այստեղ հարկավոր է սովորել՝ մարքսիստներն մտտեկա տեղական կյանքի յերեույթներին, ճիշտ վերլուծել դրանք: Մինչդեռ այն ղեկուցումներում, վոր դուք անում եք բնակչության առջև ու վորոնց մասին դուք այստեղ պատմեցիք, բոլորովին բացակայում է տեղական կյանքը: Ահա վորքան մարդ էլ այստեղ հանդես յեկավ, վո՛չ մեկը չասաց, թե ինքն առիթ է ունեցել ղեկուցումով հանդես գալու տեղական յերեույթի մասին: Չե՛ վոր մարդիկ ծընվում, մեռնում են, ամուսնանում, հարսանիք են կատարում: Բազմաթիվ հասարակական յերեույթներ կան... Մի՞թե այդ մասին վոչինչ չկա ասելու կամ չի կարելի ասել: Մի՞թե առիթներ քիչ կան:

Կոլանտեսային շինարարություն, տնտեսության զարգացում,—այս ամենը զարթեցնում է կոլանտեսականի միտքը, կապում է դա հասարակական լայն ինդիքների հետ: Չեկուցումների համար միանգամայն հետաքրքրական նյութ՝ վորքա՛ն ուղեք:

Կոլանտեսությունները զատում են աչքի ընկնող գործիչներին, և այդպիսի մարդկանց մասին ղեկուցումները,—և այն էլ յեղրակացություններով հանդերձ, նրանց դրական ու բացասական կողմերի ցուցադրումով հանդերձ,—անտարակույս, տաք վիճարանություններ առաջ կրերեն: Այդպիսի ղեկուցումներն առողջ քննարկման յենթարկելու դեպքում աճում է կոլանտեսականի հասարակական դեմքը, մեծանում է հարգանքը կոլանտեսային աշխատանքի վերաբերմամբ:

Կողքի կոլանտեսության մեջ բերքը յեղել է 10—12—15 ցենտներ՝ յուրաքանչյուր հեկտարից, իսկ ձեր կոլանտեսության մեջ—5—6 ցենտներ: Ինչո՞ւ ձեզ մոտ թույլ բերք է յեղել: Ահա ձեզ և թե՛մա ղեկուցման համար:

Մի խոսքով, յերբ դուք մտնում եք դյուզայիական կյանքի մեջ, յերբ ուզում եք աշխատել բնակչության հետ, ապա համե-

4707
39



նայն դեպս այնպես արեք, վոր դա անմիջական սերտ շփումն ունենա կյանքի հետ, վոր դիպչի, վոր զեկուցումը շոշափի մարդկանց: Այն ժամանակ, անպայման, ժողովուրդը կգնա ձեր զեկուցումները լսելու: Ինքնին հասկանալի չե, վոր մեր յերկրի և ամբողջ աշխարհի կյանքում տեղի ունեցող հասարակական և քաղաքական անցքերը միշտ չափեց ավելի նյութ են տալիս:

Վերջապես, հարկավոր է, վոր զեկուցումներն ազատ քննարկվեն և վոր մարդիկ ավելի հանդուրժողաբար վերաբերվեն յեւրոյթներին ձևին: Գլխավորն այն է, վոր հասկացվի զեկուցման հիմնական միտքը և վոր սրա մասին վիճարկանություններին մասնակցողներն իրենց կարծիքն արտահայտեն, չճնշվելով շարադրանքի ձևից, լավ հիշելով, վոր խոսքի ձևը ձեռքերովի բան է: Կարևոր է, վոր միտքն իրենը լինի:

Ուսուցչի հասարակական կյանքում անհրաժեշտ է, վոր ամենուրեք, վորտեղ նա կարող է, վորտեղ նրա կարծիքը հարցնում են, վոր նա իր ձայնը տա ազնվորեն: Հարկավոր է, վոր գյուղացիները հարգանք ունենան դեպի ուսուցչիչը, վոր միայն վորպես ուսուցչի, այլ և վորպես մարդու: Նկատի ունեցե՛ք, վոր սա քաղաքական հարց է: Սա—խորապես քաղաքական հարց է: Յեթե ուզում եք, վոր ուսուցչությունն իրեն համապատասխան դերք դրավի, ապա ուրեմն այնպիսի գիծ տարեք, վոր ուսուցչիչը լինի անկողմնակալ, չվախենա իր տեսակետն արտահայտել այս կամ այն հարցի վերաբերյալ: Գյուղացիական հարցերը լուծելիս, հասկանալի չե, ուսուցչիչը կարող է ոգնել, վորչափով նա սովյալ վայրի քաղաքացին է, վորչափով նա մասնակցում է սովյալ վայրի տնտեսական և քաղաքական կյանքին:

Իսկ գլխավորապես ուսուցչիչը կարող է գյուղացուն ոգնել կուլտուրական ասպարեզում:

Կուլտուրայի հասկացողությունը շատ լայն է—սկսած յերես լվանալուց մինչև մարդկային մտքի բարձունքները: Յեվ, յերև վակայեցե՛ք, այստեղ ավելի հեշտ է, քան վորևե ալ տեղ, սայթաքել—ընկնել քաղքենիության մեջ: Ձեռքերի մաքրությունը, հագուստի մաքրությունը, բնակարանի անհրաժեշտ կոմֆորտը և այլն—այս ամենը բնակչության կուլտուրականության նշաններ են: Հասարակական ժողովները, դրամատիկական խմբակները, պարի յերեկոները և այլն—հասարակական կուլտուրայի նշաններ են: Կոմունիստները դրանց մասնակցում են, իրավացիորեն համարելով դրանք վորպես կուլտուրական դարձացման գործոններ:

Սակայն այդ բոլորը կարող է վերածվել նաև քաղքենիական ժամանցի:

Յեվ ահա, քաղքենիության ու իսկական կուլտուրական դարձացման միջև անջրպետը տեսնելու համար պահանջվում է զգալի կուլտուրականություն և քաղաքական զգացողություն: Մարքսիստն այդ նվաճումները վրա նայում է, վորպես առաջ շարժվելու միջոցի, նոր աստիճանի: Իսկ քաղքենու համար դա ինքնանպատակ է, նա ձգտում է իր նվաճումը կայունացնելու, նա դառնում է սովյալ իրադրության ստրուկը, ամբապնդելով նաև համապատասխան բարոյախոսություն, քնեցնելով միտքը: Դրա դեմ պետք է պայքարել:

Ուստի ցանկալի չե, վոր դուք կուլտուրական աշխատանք կատարելիս նրա մեջ հասարակական—պետական տարրեր մտցնեք, քաղաքականություն մտցնեք, այլապես ձեր կուլտուրան կողմորոշումը կկորցնի և կընդունի այսպես կոչված «զավառական կուլտուրայի» բնույթ, կկորցնի կապը համապետական կուլտուրայի հետ, համապետական կուլտուրական պահանջմունքների հետ:

Կուլտուրական այն դործը, վոր դուք վարում եք, պետք է կապել ընդհանուր—սոցիալիստական շինարարության հետ, վորպեսզի մարդ մեկուսացած չմտածի: Քաղքենին—դա կցկտուր, անջատորեն մտածող մարդն է, վորն իրեն չի կապում վոր մի բանի, հետ և վոր վորի հետ:

Այս աշխատանքը շատ դժվար է: Այս շատ դժվար և նրբին աշխատանք է այն տեսակետից, վոր մարդ ինքը պետք է կուլտուրական լինի: Այստեղ միևնույն բանն է, ինչպես յերաժշտության մեջ: Յերաժիշտը կեղծ նոտան կրոնի որկեստրում, իսկ ինձ համար մի ամբողջ կեղծ դամմա աննկատելի կլինի, վորովհետև յես յերաժշտությունից չեմ հասկանում: Յերբ կեղծ նոտա յես զգում, հարկավոր է ուղղել այն:

IV. ՈՒՍՈՒՑԻՉՆ ԻՐ ԽՈՍՔԻ ՄԵՋ ԿԵՆՂԱՆԻ ՀՈԳԻ ՅԵՎ ՄԻՏՔ ՊԵՏՔ Ե ԴՆԻ

Ընկերներ՛ը, յես չգիտեմ՝ ինչպես անցավ յերեկ ձեր նիստը: Բայց ահա այսօր—չի նկատվում ձեզ մոտ մտքերի փոխանակություն—բոլորը միայն հաշիվ են տալիս իրենց աշխատանքի մասին, վորմանք գունազարդում են այն: Մի՞թե նրա համար եք դուք այստեղ հավաքվել, վոր յուրաքանչյուրը ավելի կամ պա-

կատ սովորական հաշվետվութիւն տաք: Իսկ հատկապէս այնպէս
և ստացվում, վոր մի դպրոցը նման է մյուսին և մարդիկ նույն-
պէս նման են մեկը մյուսին: Իսկ յես կարծում եյի, վոր դուք
այստեղ հաշվաքիլ եք «կուկելու» համար:

Ինչո՞ւ համար դուք, յերբ պատմում եք, ձգտում եք պատ-
րաստի Փորձութիւններով ասել: Չե՞ վոր դուք ուսուցիչներ եք,
դուք ուսաներն լեզուն գիտեք: Իսկ գիտե՞ք, թե ինչ է նշանա-
կում պատրաստի Փրագներով խոսել: Այդ նշանակում է, վոր ձեր
միտքը չի աշխատում, այլ միայն լեզուն է աշխատում: Պատ-
րաստի Փրագով դուք մարդկանց վրա տպավորութիւն չեք գոր-
ծի: Տպավորութիւն չեք գործի այն պատճառով, վոր պատրաս-
տի Փրագն ատանց ձեզ ել գիտեն: Դուք վախենում եք, վոր յեթե
ձեր ձեռով ասեք, այդ այնքան գեղեցիկ չի լինի: Մխաբխում եք:
Այլեւի լավ կլսեն այն, այլեւի հասկանալի կլինի այն:

Չե՞ք մոտ իրական կյանքում—մեծ կապ կա գյուղացիութիւն
հետ, բնակչութիւն հետ: Բայց յերբ պատմում եք այդ կյանքի
մասին, ապա այդ կապը կարծես ինչ—վոր «տեխնիկական» կապի
տպավորութիւն է թողնում.—այսքան ժողովներ դումարեցինք,
այսքան դրույցներ անցկացրինք: Կարծես թե դուք կյանքի մասին
չեք խոսում, այլ գյուղացիութիւն և ուսուցչութիւն միջև տեղի
ունեցող հարաբերութիւնները «տեխնիկայի» մասին եք խոսում:
Չե՞ վոր դուք մարդկանց հետ հանդիպում եք վոչ միայն ժո-
ղովներում և գրույցների ժամանակ: Հարկավոր է խոսել բնակ-
չութիւն հետ ունեցած ձեր հարաբերութիւնները բովանդակու-
թյան մասին:

Այդ հարաբերութիւններն ունեն և՛ քաղաքական, և՛ հոգեբա-
նական և՛ այլ կողմեր, վորոնք յերևան են գալիս մարդկային
նորմալ կյանքում: Բայց ձեր շարադրանքի մեջ չկա այդ սերտ,
որդանական կապը: Դուք յես շատ եմ ձերացել ու այդ պատճա-
ռով չեմ կարողանում վորոտալ այն: Բայց յես վոչ մի ծպտուն
չյանցի, թե ինչն է ձեզանում դժվարութիւնը, վորտեղ և ինչն է
ձեզ սեղմում: Դուք պատրաստի Փրագներ եք կրկնում միայն:
Դա Փորձալ է դարձնում խոսքը: Յուրաքանչյուր վոր պեաք է
ձգտի խոսել իր լեզվով, այն լեզվով, վոր մայրն է տալի նրան:
Ամենայալ լեզուն—մայրական լեզուն է, հալատացե՛ք իմ խղ-
ճին: Մենք ասում ենք.—ուսուցիչ, ուսուցիչ, մեծ գործ է ուսու-
ցիչ լինելը: Յե՛վ այդ ճիշտ է: Մակայն ի՞նչ դուրս կգա, յեթե
ուսուցիչն սկսի միայն պատրաստի Փորձութիւնը հրամցնել
մարդկանց:

Ահա վասիկ դուք, խոսած ընկերներից վերջինը, աշխա-
տում եք գյուղում, կարծես թե դո՛ւք եք ձեր դրութիւնից, դուք
բանն այնպէս նկարագրեցիք, վոր շատ լավ եք սպրում այժմ:
Բայց ահա, ինձ թվում է, յեթե կարգան ձեր ճառերի սղագրու-
թիւնները, ապա մարդիկ քիչ կհավատան նրան, ինչ վոր դուք
ասել եք: Յե՛վ վո՛չ այն պատճառով, վոր այդ ճիշտ չէ, վո՛չ այդ
պատճառով: Առաջին, կասեն, վոր ընկերը մի քիչ իրեն գովում
է: Յերևո՞ւմ է. յես այս—ինչ ու այս—ինչ բանն եմ արել: Հենց
վոր մարդիկ գգան, վոր վորեւե մեկն իրեն քիչ գովարանում է
և առաջ քաշում, խիտոյն ուշագրութիւնները լարում են: Յես
ձեզ ուղղակի կասեմ.—դուք գեղեցիկ խոսքեր շատ ասացիք, իսկ
հոգի չզգացվեց: Ձեր խոսքերի մեջ հոգի չզգացվեց: Սրանով յես
ամենեկին չեմ ուզում ասել, թե դուք հոգի չունեք: Ամենեկին
վոչ: Յես միայն ուզում եմ ասել ահա թե ինչ.—այն ներքին վի-
ճակը, վոր ձեզնում գոյութիւն ունի, դուք ձգտում եք արտա-
հայտել գնայուն Փորձութիւններով: Իսկ ներքին զգացմունքները
կենդանի մարդ գեղում է սովորաբար իր, հասարակ լեզվով, ա-
տանց պատրաստի ձևակերպումների դիմելու: Ուստի, յերբ գրա-
գետ մարդը կարգա ձեր սղագրութիւնը, ապա նա կմտածի—ար-
հեստականութիւն կա: Արհեստականութիւն: Չկա բնական
ներքին վիճակ: Եստ խոսքեր, ջերմ խոսքեր, վորոնք վկայում
են այն մասին, վոր բովարարված եք աշխատանքով, հրապուր-
վում եք այդ աշխատանքով, իսկ խոսքերը համոզիչ չեն, վորով-
հետև դրանք սեփական մշակման արդասիք չեն, այլ պատրաստի
յեն վերցված: Հասկացա՞ք: Ասացե՛ք, ստո՞ւմ եմ յես, թե վոչ:
Ախր ձեզ մոտ արհեստական է դուրս դալիս: (Տեղից.—ձիշտ է):

Ահա յերեակայեցե՛ք, վոր այդպիսի շարադրանքով, այդ-
պիսի գեղուցումով ժողովրդի առջև դուրս գաք և խոսեք: Ի՞նչ
եք կարծում, ի՞նչ կստացվի: Չե՞ կլսեն ու կդնան, մինչև իսկ
ատանց հարց տալու, իսկ յեթե հարց ել տան, ապա՝ քիչ:

Ուստի, առաջինը, վոր պահանջվում է ուսուցչից, դա սե-
փական, մորից ստացած՝ խոսքի վոճն է: Սովորիք քերականու-
թիւնը, վորպեսզի խոսակցութիւնը ուղիղ լինի, բայց խոսիք
բնական, սովորական լեզվով:

Յես պետք է ասեմ, վոր ուսուցչական աշխատանքը ամենա-
գժվար աշխատանքներից մեկն է: Ինձ մինչև իսկ թվում է, վոր
հարկավոր է ուսուցիչ ծնվել: Յես խոսում եմ բառիս իսկական
իմաստով՝ ուսուցչի մասին: Վո՞մանք շատ գիտեն: Յես գիտեմ

բազմաթիւ մարդիկ, վորոնք հիանալի կերպով տիրապետում են առարկային, սակայն յեթե այդպիսի մարդուն ուսուցիչ նշանակեք, նա չի կարողանա իր առարկան լավ շարադրել: Պետք է վոչ միայն իմանալ առարկան, այլ և պետք է կարողանալ դա այնպես շարադրել, վոր ունկնդիրները լավ յուրացնեն:

Այդպէս ուրեմն, յես ել հենց կարծում եմ, վոր ամենից առաջ հարկավոր է, վոր լեզուն նորմալ լինի: Յերեխաներին մի սովորեցրեք տրաֆարետի, պատրաստի ֆորմուլաների, — այդ նրանց մի ականջից մտնում, մյուսից դուրս է դալիս:

Յեթե դու խոսում ես, ապա ուրեմն խոսիր քոնը: Բառերն ուրիշ կլինեն, իսկ եյուլթյունը՝ միեւնոյնը: Յեւ ահա կտեսնես, մարդիկ ել մի քիչ ավելի ուշադրութեամբ ականջ կդնեն: Հարկավոր է, վոր խոսքը տեղին ու ժամանակին ասվի, վորպեսզի ինքն իրեն բղխի: Իսկ այստեղ այնպես է ստացվում, վոր մարդ մեխանիկորեն է խոսում: Հարկավոր է, վոր վոչ թե մեխանիկորեն, այլ որդանական կերպով բառերը տեղան, վոր դրանք քո միտքն արտահայտեն:

Պետք է խուսափել պատրաստի ձևակերպումներով խոսելուց, յերբ մարդ հիշողութեամբ է վերցնում և վոչ թե ուղեղի միջոցով մշակում: Այն լեզուն, վորով դուք բնակչութեան հետ խոսում եք, դարձրեք պարզ—հասարակ լեզու, ձեր լեզուն, գործածելով բնական վոճ: Յեթե վոճն անբնական է, ապա ստացվում է վանող սպավորութիւն: Չեղնից շատերը հավանորեն հիշում են (գուցե և վոչ) հին տիրացուհիներին, վորոնք շրջում էյին վանքերը: Նրանց թիվը մեծ էր մեր յերկրում հեղափոխութիւնից առաջ: Յեթե նրանցից մեկին լսում էյիր, ապա յերկրորդը ճիշտ նույնն էր բլրլացնում. — «Տե՛ր, աստվածամայրն արժանացուց տեսանել զսուրբ յերեսս յուր»: Չի կարելի նրանց նմանվել: Մեր լեզուն հարուստ է, և դուք մի՛ կտորանեք այն, մի՛ փշացրեք և յերեխաներին սովորեցրե՛ք դրան: Յերեխաներին ի՞նչպէս սովորեցնել դրան: Պահանջեցե՛ք, վոր նրանք նախ մտածեն, հետո խոսեն, և վոչ թե խոսեն, հետո մտածեն: Այս է հիմնականը:

Ահա վասիկ այն խնդիրները, վոր ծառայած են մեր ուսուցչութեան առջև: Իսկ ամբողջութեամբ վերցրած մեր ուսուցչութիւնը պետք է ե՛լ ավելի կուլտուրական լինի: Կուլտուրական վոչ միայն այն տեսակետից, վոր ուսուցիչներն իմանան իրենց առարկան, այլ բառիս ընդհանուր իմաստով կուլտուրական, վոր ուսուցչութեան բուն իսկ պահանջմունքները լայն լինեն: Դուք

ինքներդ տեսնում եք, վոր և՛ քաղաքային և՛ դյուղական բնակչութիւնը, վորի կուլտուրական աճումն առաջ է գնում վիթխարի քայլերով, կուլտուրական մեծ պահանջներ է ներկայացնում:

Մեր կյանքը շարունակ բարդանում է, նա պահանջում է ավելի ու ավելի բարձր «առաստաղ» մեր բոլոր աշխատողներին՝ բոլոր ասպարեզներում: Յեթե այժմ ուսուցչի «առաստաղը», որինակ, յերկու մետր է, ապա ուրեմն հարկավոր է, վոր դա լինի գոնե յերկուս ու կես մետր:

Ընկերներն այստեղ խոսեցին լրագրերի պակասութեան մասին: Անչուշա, լրագրերի կարիք կա: Բայց այնուամենայնիւ, յեթե ուզում եք, ապա ձեր կուլտուրայի աճման համար լրագիրը քիչ է: Լրագիրը հարկավոր է քաղաքական կողմնորոշման համար տվյալ մոմենտում, ընթացիկ կարիքների համար: Իսկ կուլտուրան բարձրացնելու համար պետք է դիմել կուլտուրայի պատմութեանը, մարդկութեան ամբողջ կուլտուրական ժառանգութեանը: Հարկավոր է իմանալ ուսսական գրականութիւնը և առանձնապէս գեղարվեստական գրականութիւնը: Առանց դրան յուր գնալ չի լինի: Ուսուցիչը գործ ունի մարդկային նյութի հետ, ամենայնրիտասարդ և ամենագոյունակ նյութի հետ: Գեղարվեստական գրականութիւնը—դա մարդկանց տիպերի ամենահարուստ պանորաման է, գոնե յես այդպէս եմ կարծում: Գեղարվեստական գրականութեան մեջ դուք տեսնում եք մարդկային տիպեր անվերջ այլադան դրութիւններում: Այդ պատճառով գեղարվեստական գրականութիւնն իմանալը—այդ համարյա ձեր պրոֆեսիոնալ պարտականութիւնն է: Ուստի կուլտուրան բարձրացնելը—այդ առաջին հերթին գեղարվեստական գրականութիւն իմանալն է: Նա ամենից ավելի յե հարստացնում մարդուն, հնարավորութիւն է տալիս (յես դատում եմ իմ փորձից) մարդուն՝ աճելու, ավելի հասկանալու մարդկանց:

Ահա այն ամենը ինչ վոր յես ուզում էյի ձեզ ասել: Խոսել կարելի յե անվերջ, ցավոտ հարցեր ձեզնում շատ ունեք: Ամենագլխաւորը, ամենահիմնականը, վոր յես ուզում էյի ասել, դուք լսեցիք: Յես կուղեյի, վոր տուն վերադառնալուց հետո դուք չմոռանաք իմ ցանկութիւնները: (Վարստրնդաստ ծախահարութիւններ):

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՃ

I. Մարքսիզմ-լենինիզմի թեորիային տիրապետելու մասին 5

II. Ուսուցչի գլխավոր խնդիրն և նոր մարդու—սոցիալիստական հասարակության զարգացումը դաստիարակումը 13

III. Իր գիտելիքները ժողովրդական մասսաների մեջ տանելը, հասարակական կյանքին ամեն օր մասնակցելը ամեն մի ուսուցչի պարտականությունն և 16

IV. Ուսուցիչն իր խոսքի մեջ կենդանի հոգի և միտք պետք և զնի . . . 19

Թարգմ. Հ. Տ.-Հովհաննիսյան
 Խմբագիր Ս. Հակոբյան
 Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
 Սրբագրիչ Հ. Դոլուխանյան
 Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան



Գլավիտի լրագրք № Ն—2891, հրատ. 734,
 Պատվեր № 191, արժույթ 10.000
 Թղթի չափսը 60×93¹/₁₆ (38.400 տպ. նիշ 1 ապագրական
 մամուլում 1¹/₂ տպ. մամուլ, ³/₈ թերթ թուղթ.
 Հանձնվել և արտադրության 19/IX 1939 թ.
 Ստորագրվել և տպագրելու 9/X 1939 թ.
 Գինը 20 կ.

Բաղաճտկան գրականության պետական հրատարակչության
 Տպարան, Յերևան, Սլավոկերդյան № 65



45. 565

ФРБС 20 Ч.

М. И. КАЛИНИН
ОБ ОВЛАДЕНИИ
МАРКСИЗМОМ, ЛЕНИНИЗМОМ
И ЗАДАЧАХ СОВЕТСКОГО УЧИТЕЛЬСТВА
Государственное издательство доп. литературы
Ереван ● 1939